

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱՐԲԱՀԱՄԹԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Հերթական ատեստավորման ենթակա

ուսուցիչների վերապատրաստում

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՈՒՍՈՒՑՁԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻ ԿԱՄ
ՆՐԱՆՑ ՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՋՆԵՐԻ ՀԵՏ՝ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՒՄ»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐԸ՝

ՄԱՐՏՈՒՆԻ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԲԵՅՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՄԻԿ

Ուսուցիչ՝

ԲԱՅԱՆ ԴՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԴՊՐՈՑ՝

«ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆԻ Ա. ԵՂԻԱԶԱՐԹԱՆԻ ԱՆՎԱՆ

N2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ»

ՄԱՐՏՈՒՆԻ – 2022

Բովանդակություն

1.Ներածություն.....	3
3.Գրական ակնարկ.....	10
4.Մեղքի իրավունքներն ու պարտականությունները.....	12
5. Փորձարարական հետազոտություն (թեստ ծնողների համար 5-րդ դասարան)	14
5.1.Թեստ -1.....	14
5.2.Թեստ- 2.....	15
6.Վերլուծություն.....	17
7.Գրականության ցանկ.....	19
6.Հավելված.....	20
1.Դասապլան-1.....	20
2.Դասապլան-2.....	22

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

Մաթեմատիկայի դպրոցական դասընթացի դաստիարակչական նպատակներից հիմնականը սովորողների տրամաբանական մտածողության ձևավորումն ու զարգացումն է, որին հասնելու հնարավորությունների հարցում մաթեմատիկան շահեկանորեն տարբերվում է մնացած բոլոր հանրակրթական առարկաներից:

Մաթեմատիկան ուսումնասիրում է նյութական աշխարհի տարածական ձևերը և ֆանտաստիկան հարաբերությունները: Մաթեմատիկայի հեմարտությունները, ինչպես և այլ գիտությունների հեմարտությունները, հանդիսանում են իրականության արտացոլումը մեր գիտակցության մեջ:

Մաթեմատիկայի կրթության հիմնական նպատակն է՝

1. ձևավորել ու զարգացնել տրամաբանական, լեզվական և ալգորիթմական մտածելակերպ,
2. ստեղծել թվաբանական գիտելիքներ և մեթոդներ, դրանք գործնական իրադրություններում կիրառելու, օպտիմալ ուղիներ որոնելու և գտնելու հմտություն,
3. դաստիարակել հարգանք մշակութային արժեքների, դրանց ստեղծողների նկատմամբ,
4. տալ ազգային և հայրենասիրական դաստիարակություն,
5. ստեղծել միջառարկայական կապեր,
6. դաստիարակել նպատակաւղացություն, պարտանահանչություն և պատասխանատվության զգացում,
7. սերմանել վստահություն սեփական ուժերի նկատմամբ,
8. ձևավորել վերլուծական, առօրյայում կողմնորոշվելու կարողություն,
9. ձևավորել ինքնուրույն աշխատելու, այլոց հետ համագործակցելու և համաձայնության գալու կուլտուրան:

Մարդկանց մտածողության մեջ իրականության արտացոլումը ենթարկվում է որոշակի օրենքների, ընթանում է որոշակի ձևերով: Դեպի հեմարտությունների հանապարհը տանող մտածողության օրենքները և ձևերը կազմում են տրամաբանություն գիտության առարկան: Մտածողության օրենքների և ձևերի ուսումնասիրության պրոցեսը և պրակտիկ գործունեության մեջ նրանց կիրառության ունակությունների մշակումը ընթանում է արագ, եթե նրանք համապատասխան կերպով կազմակերպվում են: Այդ կապակցությամբ ոչ վաճառ գեր կարող է խաղալ մաթեմատիկայի դասավանդումը: Դասավանդման պրակտիկան ցույց է տալիս, որ 5-7-րդ դասարանի աշակերտները զլխավորապես յուրացնում են առարկան և մտածողական գործունեության բովանդակությունը և դեռևս չեն գիտակցում իրենց մտածողության օրինաչափությունները: Բարձր դասարանների աշակերտները հետաքրքրվում են ոչ միայն առարկայով, այլ հենց մտածողության պրոցեսով: Ժամանակակից կրթական հայեցակարգերում ավելի է կարևորվում սովորողների բարձրակարգ մտածողության զարգացման խնդիրը: Աշխարհում տեղի ունեցող արագընթաց զարգացումները իրենց անմիջական ներգործությունն են ունենում կրթական համակարգերի վրա՝ առաջադրելով գիտելիքահեն սնտեսության և տեղեկատվական հասարակության պայմաններում գործող և ապրող մարդու ձևավորման նոր պահանջ: Եվ դա իր հերթին առաջ է բերում կրթության բովանդակության վերանայման ու արդիականացման խնդիր: Հանրահայտ է, որ հանրակրթության առանցքային նպատակներից մեկը աշակերտին մտածել սովորեցնելն է:

Կրտսեր դպրոցական տարիքում մշակվում են բազմաթիվ հմտություններ ու կարողություններ, որոնք սովորողի հետագա գործունեության հիմնաքարերն են դառնում: Սովորողի մաթեմատիկական մտածողության և հետաքրքրությունների ձևավորման խնդրով անհրաժեշտ է մտահոգվել նրա դպրոց մտնելու առաջին իսկ օրից, նրա հետաքրքրություններին տալ որոշակի ուղղվածություն: Անժխտելի է, որ ուսուցման արդյունավետությունը ամենից առաջ պայմանավորված է սովորողների մտավոր ակտիվության մակարդակով: Եթե նրանք չեն ցուցաբերում անհրաժեշտ հետաքրքրություն և ձգտում

հաղորդվելիք տեսական նյութի կամ տրված առաջադրանքին նկատմամբ, գտնվում են պատկառմամբ, ապա ուսուցման արդյունավետության մասին խոսելը դառնում է ավելորդ: Այդ նպատակով մաթեմատիկայի դասը պետք է դարձնել գրավիչ, հետաքրքիր, բարձրացնել սովորողների մտավոր ակտիվությունը: Ուսումնական գործընթացի ամենադժվար պահերից մեկը դասանյութի խորությունը հետաքրքրության հետ շաղկապելն է: Դասավանդման մեթոդների ճիշտ ընտրության դեպքում մաթեմատիկայի դասաժամը անսպառ հնարավորություն է ընձեռում զարգացնելու սովորողի մտածողությունը, մաթեմատիկական հետաքրքրությունները:

ԴՊՐՈՑ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Դաստիարակության հիմնական նպատակը երեխայի անձի ձևավորումն ու նրա հետագա զարգացումն է: Դաստիարակությունից են կախված երեխայի կողմից իրականության ընկալումը, նրա հարաբերությունները շրջապատի մարդկանց հետ:

Երեխայի դաստիարակությունն իրականացվում է և՛ և գիտակցաբար և՛ անգիտակցաբար:

Երեխայի դաստիարակությունը շատ ավելի կարևոր է, քան որևէ առարկայի կամ բոլոր առարկաների գիտելիքները միասին վերցրած, բայց գիտակցաբար դաստիարակությամբ զբաղվում են ընտանիքն ու դպրոցը, անգիտակցաբար՝ շրջապատը, հեռուստատեսությունը, համացանցը և այլն:

Ո՞րքանով է կախված դպրոցից.

Դաստիարակությունը հանրակրթության կարևորագույն բաղադրիչներից մեկն է և հենց դպրոցին ու ուսուցչին է բաժին ընկնում դաստիարակչական գործընթացի զգալի բաժինը:

Դաստիարակչական համակարգի նպատակն է՝

1. օգնել երեխային արդյունավետ կերպով հարմարվել աշխարհում անընդհատ տեղի ունեցող փոփոխություններին ,
2. բարեխիղճ և համարժեք կերպով արձագանքել շրջապատում տեղի ունեցող երևույթներին,
3. նպատակաուղղել երեխայի արժեքային համակարգի ձևավորումը,
4. զարգացնել սովորողների հանաչողական ակտիվությունը,
5. առաջնություն տալով ձևավորել հարգալից վերաբերմունք լեզվի, մշակույթի և ազգային ավանդույթների նկատմամբ՝ դարձնելով նրան այդ արժեքների կայուն կրողը,

6. յուրաքանչյուր անհատի մոտ ստեղծել ինֆնակատարելագործման ներքին պահանջ:

Վերոնշյալ խնդիրները նպատակ են հետապնդում դպրոցում ստեղծել հնարավորինս միասնական դաստիարակչական միջավայր: Դպրոցի դաստիարակչական միջավայրը ներառում է՝

- դպրոցի անձնակազմը,
- դասարանական անձնակազմը,
- առակերտների ինֆնավարությունը,
- դպրոցի ավանդույթները:

Մեր կարծիքով դպրոցում դաստիարակչական համակարգի կատարելագործման նպատակով անհրաժեշտ է՝

- դաստիարակչական գործընթացում առաջնորդվել միասնական սկզբունքներով և կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով,
- ծնողներին ակտիվորեն ընդգրկել դպրոցի դաստիարակչական գործընթացներում,
- ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ առակերտների միջև, ինչպես նաև առակերտների ու ուսուցիչների միջև բավարար համագործակցություն, ինչպես նաև միմյանց հետ հաղորդակցվելու համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ,
- դպրոցում ստեղծել «Ծնողական համալսարան» և դրանում ընդգրկել դասուցիչների, հոգեբանների, մանկավարժական գիտության տարբեր մասնագետներին: Անհրաժեշտ է նաև պարբերաբար վերլուծել այդ համալսարանում հավաքագրված դաստիարակչական բնույթի խնդիրները, որոնք առնչվում են ծնողների կողմից այս ուղղությամբ բավարար գիտելիքներ, կարողություններ և հմտություններ սրամադրելուն և նպատակ ունեն օգնելու վերջիններին,
- համագործակցել իրավապահ մարմինների հետ:

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Մատաղ սերնդի հայրենասիրական դաստիարակությունը մշտապես գտնվել է ժամանակակից դպրոցի ուշադրության կենտրոնում, քանի որ մանկությունն ու պատանեկությունը ամենապատասխանատու շրջանն է անձի մոտ հայրենիքի նկատմամբ իր պատկերացումները ճիշտ ձևավորելու, սիրտ զգացմունքն արմատավորելու և որպես հայրենիքի պաշտպանի գիտակցումը սերմանելու համար: Այս հարցն էլ ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօր ակներև է ավանդական հայրենասիրական գիտակցության մակարդակի նվազում:

Հայրենիքը միայն հողն ու ջուրը չի, որ արժանի է և երթակա պաշտպանության նրա գավակների կողմից: Հայրենիքը նաև մեծ տուն է, ընտանիք, որի հետ մարդը պետք է աշխատի և որին պետք է ծաղկեցնի , դեկավարի ու դարձնի բարեկեցիկ և արժանապատիվ ապրելու տեղ: Հայրենիքը պետք է լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր անձի համար պատիվ լինի:

ԸՆՏԱՆԻՔ – ԴՊՐՈՑ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԼՎԱՎՈՒՄ

Դատարարությունը հաջողությամբ է պսակվում , եթե ընտանիքի հետ տարվող աշխատանքը և երեխայի դաստիարակությունը կատարվում են միաժամանակ: Այսօրվա պայմաններում առանց ընտանիքի հետ ձևավորված համագործակցության առկայության հնարավոր չէ արդյունավետ կերպով կազմակերպել սովորողների հետ աշխատանքը:

Ընտանիք - դպրոց համագործակցությունը նպատակ ունի՝

- ✓ էլ ավելի արդյունավետ դարձնել ընտանիք- դպրոց փոխադրության համակարգ՝ բարձրացնելով փոխադարձ վստահության մակարդակը,
- ✓ բարձրացնել աշակերտների ուսուցման արդյունքների համար ծնողների պատասխանատվությունը,
- ✓ ծնողներին ավելի ակտիվորեն ներգրավել դպրոցի գործունեության մեջ,
- ✓ նպաստել ծնողների և ուսուցիչների խմբային աշխատանքի արդյունավետությունը:

Ընտանիք – դպրոց համագործակցության բարելավման համար անհրաժեշտ է՝

Դպրոցի և ծնողների համագործակցության բովանդակության մեջ ներառել երեք հիմնական ուղղություններ՝

- ծնողների հոգեբանամանկավարժական տեղեկացվածության բարձրացում,
- ուսումնադաստիարակչական գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնումը,
- դպրոցի կառավարման գործընթացներում ծնողների մասնակցության մեծացում:

2. ԳՆԱՀԱՏՈՒՄ

Գնահատումը ուսումնական գործընթացի արդյունավետության և ուսուցման արդյունքների բացահայտման միջոց է: Գնահատմամբ պարզում ենք յուրաքանչյուր սովորողի և դպրոցի կողմից առարկայական և դպրոցական չափորոշիչների ուժրագրերի պահանջների կատարման ամբողջական պատկերը: Գնահատումը հնարավորություն է տալիս որակավորելու գիտելիքները և կարողությունները հաղորդակցման հիմնական ձևերում՝ ընկալում, մեկնաբանում, նորտեքստերի ստեղծում, հարց ու պատասխան, խոսքային հաղորդակցման ունակություններ: Գնահատման հիմնական նպատակն է սովորողների գիտելիքների մակարդակի, կարողությունների ու հմտությունների տիրապետման ստուգումը, արժեքային որակների ձևավորման ապահովումը և դրանց հիման վրա ուսումնական գործընթացի արդյունավետության , ուսման որակի բացահայտումն ու վերահսկումը: Գնահատման հիմնական սկզբունքներն են՝ արդարությունը, անկողմնակալությունը, հավաստիությունը, հիմնավորվածությունը, հուսալիությունը, մատչելիությունը և թափանցիկությունը:

Գնահատումը պետք է խրախուսի աշակերտին, արձանագրի աճը, ուժեղ և թույլ կողմերը, հաջողություններն ու վրիպումները:

Սովորողին ուղղված գնահատականը պետք է վերաբերի նրա կոնկրետ գործողություններին, արարքներին, գործունեության արդյունքներին, այլ ոչ թե անձին: Այն փաստը, որ սովորողը չի կարողանում լուծել խնդիրը դեռևս հիմք չէ դատողություններ անելու նրա մտավոր ընդունակությունների մասին: Ուսուցչի համար գնահատումը պետք է աշխատանքը պլանավորելու, փոփոխություններն արձանագրելու, նպատակին հասնելու աստիճանը պարզելու, արդյունքը փաստելու միջոց լինի: Ծնողի համար այն պետք է երեխայի առաջընթացն արձանագրելու, ինչպես

նաև դաստիարակության ձևերի շուրջ մտորելու, դրանք ավելի հկուն և բազմազան դարձնելու միջոց
հանդիսանա:

Պետք է գնահատենք գիտելիքները, հմտությունները, դիրքորոշումը և արժեքները:

ԳՐԱԿԱՆ ԱՎՆԱՐԿ

Ծնողների օգնությամբ կարելի է աշակերտներին բացատրել մաթեմատիկայի նշանակությունը արդի աշխարհում: Հարց՝ Ի՞նչպես.

Նախ մեջբերումներ անել մեծ մաթեմատիկոսների ասույթներից.

Ա. Կոլմոգորով- «Յուրաքանչյուր մարդ պատկանում է տարբեր ուղորտների, որոնցից երեք ուղորտներն են՝ մարդկությունն ամբողջությամբ, հայրենիքը և մարդը ինքը, ողջ մարդկության և իր հայրենիքի գավազը»:

Մաթեմատիկան անհրաժեշտ է այս երեք ուղորտներին:

Գալիլեո Գալիլեյ – «Բնության մեծ գիրքը գրված է մաթեմատիկայի լեզվով», կամ «Գիտության հարցերում հազարների կարծիքի վրա հենված հեղինակությունը չարժե մեկ անհատի սեփական մտածողության կայծը»:

Անգլիացի իմաստասեր Ռոջեր Բեքոն – «Նա ով չգիտե մաթեմատիկա, չի կարող իմանալ որևէ այլ գիտություն և անգամ չի կարող բացահայտել իր սգիտությունը»:

1956 թվականին Ժնևում տեղի ունեցած միջազգային համաժողով նվիրված մաթեմատիկական կյրությունը, դուրսերից մեկը՝

«Մաթեմատիկական կյրությունը բարիք է, որի իրավունքը ունի յուրաքանչյուր մարդկային էակ, անկախ ազգությունից, սեռից, վիճակից և գրադմունքից»:

Բերքրան Ռասել - «Ինֆուրույն մտածող մարդիկ հեշտ չեն ենթարկվում անհրաժեշտ ազդեցությունների և վարչարարական դժվարությունների աղբյուր կարող են լինել»:

Ա. Դիստերվեզ - «Վատ ուսուցիչը ներկայացնում է համարությունը, իսկ լավը՝ սովորեցնում է այն հայտնագործել»

Այս ասույթներից հետո կարելի է ձևակերպել այս միտքը՝

Մաթեմատիկայի առավել հիմնարար արդյունքները, գաղափարները, սկզբունքները, մեթոդները և մոտեցումները պարզ են և չեն պահանջում հատուկ «Ընդունակություններ», ընդունակություններ, որոնք ավելի են, քան մայրենի լեզվով խոսելու ընդունակությունները:

Ծնողներին պետք է բացատրել **Մաթեմատիկայի** մեծագույն առաքելությունը արդի աշխարհում: Ոչ բոլորն են ունակ հայտնագործություններ կատարել, ոչ բոլորն են հիշողության մեծածավալ ընդունակությունով օժտված, ոչ բոլորն են ցանկություն հայտնում մաթեմատիկա սովորել ,ոչ բոլորն են կարողանում իմացածը

ապացուցել և ոչ բոլորն ունեն հավասար ընդունակություններ և ուսկ են այն իրականացնել, բայց բոլորի համար կարևոր է իմանալ մաթեմատիկայի տարրական գիտելիքների ձեռքբերումը:

Մեր հասարակությունը շատ խայտաբղետ և բազմաբեղուն ընդունակություններով օժտված անձնավորություններ են, որոնք այս ֆազաֆական և տնտեսական վիճակուն կարողանում է լուծել օրվա գոյատևման խնդիրը:

ԾՆՈՂԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ սահմանադրության 28 –րդ հոդվածով սահմանվում են ծնողի իրավունքներն ու պարտականությունները.

Սովորողի ծնողն իրավուն ունի՝

1. երեխայի ուսուցման համար ընտրելու ուսումնական հաստատությունը և կրթության ձևը,
2. համագործակցելու ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների հետ իր երեխայի կրթության կազմակերպման հարցերով,
3. դիմելու համապատասխան մարմիններին երեխայի գարգացման , ուսուցման և դաստիարակության հարցերով,
4. պաշտպանելու իր և իր երեխայի օրինական շահերը համապատասխան մարմիններում,
5. մասնակցելու հանրակրթական ծրագրերի իրականացման և դրանց արդյունավետ գնահատման գործընթացին,
6. մասնակցելու ուսումնական հաստատության ներքին գնահատմանը,
7. մասնակցելու ուսումնական հաստատության կառավարմանը՝ ուսումնական հաստատության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Սահմանադրությամբ սահմանված ծնողի իրավունքներն են, որոնք համարյա բոլոր ծնողները պահպանում են:

Այժմ թվարկենք սովորողի ծնողի պարտականությունները ըստ ՀՀ սահմանադրությամբ՝

Սովորողի ծնողը պարտավոր է՝

1. երեխայի համար ընտանիքում ապահովել համապատասխան պայմաններ կրթություն ստանալու համար,
2. մշտապես հոգալ երեխայի ֆիզիկական առողջության և հոգեկան վիճակի մասին, ստեղծել համապատասխան պայմաններ երեխայի հակումների և ընդունակությունների գարգացման, կրթական կարիքների բավարարման համար,
3. հարգել երեխայի արժանապատվությունը, դաստիարակել աշխատասիրություն, բարություն, ընկերասիրություն, հանդուրժողականություն, գրասրտություն, հարգալից վերաբերմունք ընտանիքի, մեծահասակների, պետական և մայրենի լեզվի, ժողովրդական ավանդույթների և սովորույթների նկատմամբ,

4. դաստիարակել հարգանք ազգային, պատմական, մշակութային արժեքների և հայրենիքի նկատմամբ, հոգատար վերաբերմունք պատմամշակութային հարստության և շրջակա միջավայրի նկատմամբ, հանդուրժողական վերաբերմունք այլ ժողովուրդների և մշակութիւնների նկատմամբ,
5. դաստիարակել հարգանք ուսումնական հաստատության և մանկավարժական աշխատողների նկատմամբ,
6. սույն օրենքի 15-րդ և 16-րդ հոդվածներով սահմանված ժամկետներում երեխային բերել ուսումնական հաստատություն,
7. հատուցել իր, ինչպես նաև իր երեխայի կողմից ուսումնական հաստատությունը հասցված վնասը,
8. սովորողին գերծ պահել ծխախոտ, ոգելից խմիչքներ, հոգեմեա նյութեր, զենք, զինամթերք, թունավոր, պայթուցիկ, ինչպես նաև օրենքով և ուսումնական հաստատության կանոնադրությամբ արգելված այլ նյութեր օգտագործելուց:

Եթե կարգանք այս կետերը, ապա ծնողների մեծամասնությունը համարյա լրիվ իրագործում է իրեն տրված իրավունքները, բայց ահանրյա չի կատարում պարտականությունների մեծ մասը: Այստեղից հետևություն.

Ծնողների մեծամասնությունը չգիտեն իրենց պարտականությունները, կամ գիտեն, բայց չեն ուզում դրանք իրագործել:

Ծնողներին պետք է բացատրել հոդվածի յուրաքանչյուր կետի դերն ու նշանակությունը, միայն իրավունքներից օգտվելով ոչ մի պարտականություն չկատարել, կամ կատարել որոշակի պարտականություններ՝ բացի 3-րդ, 4-րդ 5-րդ կետերի:

Պետք է դպրոցի համապատասխան ցուցատախտակուն տեղադրել ծնողի, երեխայի և ուսուցչի իրավունքներն ու պարտականությունները պարունակող փաստաթղթային տարբերակները (տպագրված վիճակով):

Ծնողներին պետք է իրազեկել երեխայի ընդունակությունների մասին, կարևոր չէ երեխան ինչքան է կարողանում ընկալել, ինչքան գիտի, ինչ մտածելակերպ ունի, ինչպիսի բարոյահոգեբանական մթնոլորտում է ապրում, հասարակությունը ինչպիսի վերաբերմունք ունի երեխայի նկատմամբ:

Ծնողի հետ մշտապես կապ հաստատել դասղեկի և մնացած համապատասխան աշխատակիցների միջոցով իր երեխայի մաթեմատիկական գիտելիքների, ձեռքբերումների, ընդունակությունների և ակնկալվող արդյունքների մասին:

Բայց հարյուրերորդ, միլիոներորդ անգամ կրկնվեմ, եթե երեխայի ծնողը չի կատարում իրեն տրված իրավունքներն ու պարտականությունները, աշակերտը՝ իրենը, իսկ ուսուցիչը՝ իրենը, ապա որևէ դրական արդյունք ակնկալել անիմաստ է:

ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ (ԹԵՍՏ ԵՆՈՂՆԵՐԻ ՀԱՄԱՐ V - ԲԻ ԴԱՍԱՐԱՆ)

ԹԵՍՏ-1

1. Ի՞նչ է թվանշանը

2. Որո՞նք են բնական թվերը

3. Ի՞նչ թվաբանական գործողություններ գիտեք

4. Թվարկե՛ք չափման միավորները (բալորը)

5. Բնական թվերը համեմատելը ըստ գրառման

6. Թվարկել բազմապատկման օրենքները

7. Թվարկել բաժանման հատկությունները

8. Որն է հատված

9. Թրև է հառագայթ, ուղիղ և հարթություն

10. Թվերից որն է ամենամեծը և որը՝ ամենափոքրը _____

7. Ի՞նչպես են համեմատում սովորական կոտորակները

8. Թվաբանական օրենքները կոտորակների գումարման, բազմապատկման և բաժանման համար

9. Ո՞րն է խառը թիվ

10. Գործողություններ խառը թվերով

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Կատարելով թեստ-1-ի հանձնարարությունը աշակերտների ծնողների շրջանում, կարելի է ծնողներին բաժանել մի քանի խմբերի և ըստ այդմ որոշել, նախնական տեսքով, որ աշակերտից ինչ մաթեմատիկական գիտելիքներ սկսելու են: Նախնական ստացված արդյունքներից ելնելով ուսուցիչը պարտավոր է յուրաքանչյուր աշակերտի համար ձևակերպել սկսելու արդյունքը և համապատասխան առաջադրանք դնել Իր առջ, որպեսզի հասնի սկսելու արդյունքի:

Թեստ-1 – անցկացումից հետո ծնողները ավելի հետաքրքրվեցին մաթեմատիկայով և տարվա ընթացքում երեխաների ծնողները հաճախակի այցելում էին դպրոց, մասնակցում էին մաթեմատիկայի դասաժամերին և իրենց հուզող հարցերի վերաբերյալ ստանում սպառիչ պատասխաններ:

2-րդ կիսամյակում 5-րդ դասարանում (18 աշակերտ, ներկա էին 18 աշակերտ) անցկացրել են փորձաարարական դաս «Բնական թվի բաժանարարներն ու բազմապատիկները» թեմայով:

Երեխաները բաժանված էին 4 տարբեր խմբերի

1-խումբ – Այս խմբի աշակերտները ունեն բարձր ընդունակություն և առաջադրանքները կատարեցին ժամանակին և շատ արագ,

2-րդ խումբ – Այս խմբի աշակերտները առաջադրանքները կատարեցին ժամանակի սահմաններում,

3-րդ խումբ – Այս խմբի աշակերտները առաջադրանքները չկարողացան ժամանակին կատարել առաջադրանքները, բայց մինչև դասաժամի ավարտին հասցրեցին կատարել,

4-րդ խումբ – Այս խմբի աշակերտները առաջադրանքները չկարողացան կատարել՝ ընդհանրապես:

Հաջորդ դասաժամին դասարանի բաժանված խմբերից մեկական աշակերտ միավորվեց, կազմեց առանձին 4 խմբեր և ստացված նոր խմբերին հանձնարարություն տրվեց բացատրել առաջադրանքները և օգնել խմբի անդամներին կատարել:

Արդյունքը գոհացուցիչ էր:

Ուսուցիչը տարեկերջում անցկացնում է նաև թեստ-2 –ը ծնողների (աշակերտների ներկայությամբ) հետ և պարզում է իր սված գիտելիքների արդյունքը ամբողջ տարվա ընթացքում:

Դասաժամին նկատվեց, որ երեխաների ծնողներից մի քանիսին օգնում էին ծնողները, իսկ մի քանիսին էլ երեխաները:

Տարեկերջյան ծնողական ժողովներից մեկի ժամանակ մաթեմատիկայի ուսուցիչը պարտավոր է ծնողներին մանրամասնորեն բացատրել երեխայի մանկավարժական, ուսումնական, հոգեբանական և արժեքային համակարգը ու իր կատարած աշխատանքը և սպասված արդյունքը:

Ց-րդ դասարանում անցկացրել են փորձարարական դաս «Պարբերական տասնորդական կոտորակները» թեմայով:

Դասարանը բաղկացած է 23 աշակերտից, դասին ներկա էին 21-ը:

Դասարան բաժանել են 4 խմբի՝ ըստ երեխաների ցանկության իմ օգնությամբ (Որ յուրաքանչյուր խմբում ընդգրկվի բոլոր մակարդակի սովորող երեխաներից):

Դասաժամը օգտագործել են ամբողջությամբ և ստացված արդյունքից գոհ են, որովհետև աշակերտները հանձնարարությունը կատարեցին իրենց ցանկությամբ՝ նույնիսկ առաջադրանքները թողել էի իրենց ցանկության, բայց առաջադրանքների բարդության աստիճանը բոլորի համար պետք է լիներ նույնը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մաթեմատիկա – 5-րդ դասարան 2016թ.

Հանրահաշիվ – 8-րդ դասարան 2017թ.

Մաթեմատիկան դպրոցում 2007թ.

ՀԱՎԵԼՎԱԾ

Դ ա ս ա պ լ ա ն-1

Ուսուցիչ՝ Բայանդուր Հովհաննիսյան

<i>Առարկա՝</i>	Մաթեմատիկա	Ամսաթիվ	10.01.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	5^բ
Թեմա՝	Բնական թվերի բազմապատիկներն ու բաժանարարները- 4 ժամ						
Օգտագործվող նյութեր՝	<i>Դասագիրք, գրատախտակ</i>						
Դասի նպատակը՝	<i>Կարողանալ թվերի բաժանելիության հայտանիշների մասին գիտելիքների ամրապնդումն ու ընդլայնումը, դրանց կիրառումը:</i>						
<i>Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ</i>							
Վերջնարդյունքները	<p style="text-align: center;"><i>Աշակերտը կկարողանա.</i></p> <ul style="list-style-type: none"> • <i>Սահմանի պարզ, բաղադրյալ փոխադարձ պարզ թվերի հասկացությունները, որոշի թվի պարզ կամ բաղադրյալ լինելը:</i> 						
Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)			
1-2րոպե	<i>1-նախապատրաստում են հարցեր տնային առաջադրանքներից:</i>	<i>1-հաշվառում է կատարում</i>	<i>1.Ո՞րոնք են պարզ և բաղադրյալ թվերը:</i>	3-Կարճ դասախոսության մեթոդ:			
2-5րոպե	<i>2-տալիս են հարցեր անհասկանալի առաջադրանքների վերաբերյալ</i>	<i>2-Անդրադարձ տնային առաջադրանքներին</i>	<i>2. Թվարկի մի քանի պարզ թվեր</i>				
3-10րոպե	<i>3-Լսում են, հարցեր տալիս, տետրում գրի առնում լուծման պլզորիթմը:</i>	<i>3- Մատուցում է նոր նյութը: Պատասխանում հարցերին:</i>	<i>3-Հարցադրումներով բացահայտել և վերացնել աշակերտների կողմից սխալ ըմբռնումները:</i>				
	<i>4.Լուծելու են</i>	<i>4-Հանձնարարում է կազմել մի քանի պարզ և</i>					

<p>4-15րոպե</p>	<p><i>առաջադրված վարժությունները:</i></p> <p>5- ներկայացնում են աշխատանքները:</p>	<p><i>միքանի հատ բաղադրյալ թվեր, շրջում է դասարանում, օժանդակում աշակերտներին:</i></p> <p>5-Անհատապես նշում է աշակերտներից յուրաքանչյուրի ձեռքբերումները դասի արդյունքում, նշում բացթողումները:</p>	<p>4-Եթե դեռևս նկատվում է սխալ ըմբռնումներ, ապա հարցերի միջոցով /դիմել աշակերտների օգնության/ վերացնել դրանք</p>	<p>4-Խմբային աշխատանք՝ յուրաքանչյուր խմբին հանձնարարել կազմել որևէ երկու մեծությունների կախվածության բանաձևը, գտնել ստացված ֆ-ի D(f)-ը E(f)-ը,:</p>
<p>5-10րոպե</p>	<p>5- ներկայացնում են աշխատանքները:</p>			
<p>Տնային աշխատանք 3ր</p>	<p><i>Տնային առաջադրանքի հանձնարարում: վարժ. 869բ,դ: 870: 871ե,գ: 880բ,դ</i></p>			

Փոխանորեն՝ _____

Դ ա ս ա պ լ ա ն-2

Ուսուցիչ՝ Բայանդուր Հովհաննիսյան

<i>Առարկա՝</i>	Հանրահաշիվ	Ամսաթիվ	10.01.2022թ.	Կիսամյակ	2	Դասարան	8^Ա
Թեմա՝	Պարբերական տասնորդական կոտորակներ 1Ժամ						
Օգտագործվող նյութեր՝	<i>Դասագիրք, գրատախտակ</i>						
Դասի նպատակը՝	Իրական թվերի և անվերջ պարբերական կոտորակների հետ գործողությունների կատարման հմտությունների ձևավորումը և զարգացումը						
<i>Ուսուցանման արդյունքներ, որոնք կփաստեն, որ ուսուցումը տեղի ունեցավ</i>							
Վերջնարդյունքները	<p style="text-align: center;"><i>Աշակերտը կկարողանա.</i></p> <ul style="list-style-type: none"> • Սահմանի ռացիոնալ, իռացիոնալ և իրական թվերը, բերի օրինակներ: 						

Գործողություններ(ժամ/տևողություն)	Ուսումնական գործունեություն <i>Աշակերտներ</i>	Ուսումնական գործունեություն <i>Ուսուցիչ</i>	Հարցադրումներ	Կիրառվող մեթոդ (ներ)
1-3 րոպե	<i>1-նախապատրաստում են հարցեր տնային առաջադրանքներից:</i>	<i>1-հաշվառում է կատարում</i>	<i>1. n ը թվերն են իրական</i>	
2-5րոպե	<i>2-տալիս են հարցեր անհասկանալի առաջադրանքների վերաբերյալ</i>	<i>2-Անդրադարձ տնային առաջադրանքներին</i>	<i>2. n ը են է սովորական և տասնորդական կոտորակների տարբերությունը::</i>	
5-10րոպե	<i>3-Լսում են, հարցեր տալիս, տեսքում գրի առնում լուծումը:</i>	<i>3- Մատուցում է նոր նյութը: Պատասխանում հարցերին:</i>	<i>3-Հարցադրումներով բացահայտել և վերացնել աշակերտների կողմից սխալ ըմբռնումները:</i>	3-Կարճ դասախոսության մեթոդ:
5-14րոպե	<i>4.Լուծելու են առաջադրված վարժությունները:</i>	<i>4-Հանձնարարում է կազմել տրված թվերով կոտորակներ՝ սովորական , պարբերական տասնորդական, շրջում է դասարանում, օգնում աշակերտներին:</i>	<i>4-Եթե դեռևս նկատվում է սխալ ըմբռնումներ, ապա հարցերի միջոցով /դիմել աշակերտների օգնության/ վերացնել դրանք</i>	4-Խմբային աշխատանք՝ յուրաքանչյուր խմբին հանձնարարել կազմել տրված թվերով սովորական և պարբերական տասնորդական կոտորակներ՝ եթե հնարավոր է:
5-10րոպե	<i>5- ներկայացնում են աշխատանքները:</i>	<i>5-Անհատապես նշում է աշակերտներից յուրաքանչյուրի ձեռքբերումները դասի արդյունքում, նշում բացթողումները:</i>		
Տնային աշխատանք 3ր	<i>Տնային առաջադրանքի հանձնարարում: վարժ. 275-277</i>			

Փոխանորեն՝ _____